ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

26 հուլիսի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Կարեն Բաղայյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետերը, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ խմբակցությունների փորձագետներ:

Ելույթներով հանդես եկան Գյումրի համայնքի ավագանու ներքոհիշյալ անդամները,

Քնարիկ Հարությունյանը պարզաբանեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից արտահերթ նիստ նախաձեռնելու դրդապատճառները, ներկայացրեց ներկայացվող նախագծի նախապատմությունը և նպատակը, որն է՝ ՀՀ վարչական դատարան ներկայացնել պետական համայնքային շահերի պաշտպանության մի շարք հայցեր՝ Գյումրի համայնքի ղեկավարների 2003-2018թթ. թվով 24 ուրոշումներ անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքները կիրառելու մասին: Մի քանի գույք տիկին Հարությունյանը առանձնացրեց՝ ներկայացնելով մանրամասն տեղեկատվություն: Նա համոզմունք հայտնեց, որ նիստի նախաձեռնությամբ հավատարիմ են մնում որդեգրված արժեքներին, իսկ ՀՀ քաղաքացիներն այլևս անհանդուրժողական են ապօրինությունների դեմ: Կոչ արեց բոլոր ավագանու անդամներին լինել Գյումրու և գյումրեցու կողքին, չդրսևորել անտարբերություն:

Լուսինե Սանոյանն իր ելույթը կառուցեց այն տրամաբանությամբ, որ ավագանին չէ այն ինստիտուտը, որը պետք է մեղավորների անուններ հնչեցնի, կոչ արեց իր գործընկերներին գործընթացը չքաղաքայանացնել և ավելորդ համարեց մեղավորների անուններ հնչեցնելը. «Մեզ համար առաջնային է Գյումրու և Գյումրեցու շահը, մենք կաշկանդված չենք որևէ հանգամանքով, «Բալասանյան դաշինքը» նախագծին «կողմ» է քվեարկելու»:

Վոլոդյա Հակոբյանը հրավիրեց ներկաների ուշադրությունը նիստից բացակայող ավագանու անդամների՝ հատկապես «Հանրապետական» խմբակցության վրա, որ կարող էին գալ և «դեմ» քվեարկել՝ պարզաբանելով իրենց դիրքորոշումը ժողովրդի համար: Նշեց, որ սա քաղաքական գործընթաց է ևս, քանի որ հստակ վերաբերում է քաղաքական գործիչների և նրանց կայացրած որոշումների և որ ավագանին է համայնքի առաջնային շահապաշտպան օղակ, որը մանդատ է տալու դատարանին: Շնորհակալություն հայտնեց տիկին Սանոյանին՝ հայտնած դիրքորոշման համար:

Կարեն Մալխասյանը գյումրեցիներին պարզաբանումներ տվեց նախագծի վերաբերյալ և ասաց, որ այս հարցի շուրջ նա իր դիրքորոշումը վաղուց է հայտնել և այն չի փոխվել. այս հարցով միանշանակ պետք է զբաղվի դատախազությունը, քանի որ այս գործերի նախապատմությանը դատախազությունը լավատեղյակ է: Պարոն Մալխասյանը հայտարարեց, որ իր խմբակցությունը քվեարկությանը չի մասնակցելու:

Վարդևան Հակոբյանը շնորհակալություն հայտնեց Ք.Հարությունյանին նախադեպը չունեցող նախագծի համար՝ նշելով, որ սա լրիվ իրավական գործընթաց է: Խոսեց փաստերով, որ նշված գործերից երկուսը արդեն դատարանում են և որ լավ կլիներ գործերի վերաբերյալ նախագծերը օրակարգ մտնեին առանձին-առանձին: Պարոն Հակոբյանն ասաց,որ սա դատխազության գործն է: Նա նախատեց ներկաներին նախագծին «կողմ» քվեարկելու դիրքորոշում ունենալու համար և հայտարարեց,որ ինքը չի մասնակցելու քվեարկությանը:

Համայնքի ղեկավարը տիկին Հարությունյանին առաջարկություն արեց 30 րոպե ընդմիջում անել՝ քննակելու և որոշակի փոփոխություններ նախագծում կատարելու համար՝ մասնավորապես վրիպակի ուղղում՝ տարեթվերի հետ կապված, փաստաբանական ծառայության համար գումարի հատկացում և ժամկետների վերանայում: Առաջարկությունն ընդունվեց և նիստն ընդմիջվեց:

Ընդմիջումից հետո համայնքի ղեկավարն ներկայացրեց 4 առաջարկություն, որոնք ընդունվեցին հեղինակի կողմից և լրամշակված նախագիծը դրվեց քվեարկության:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ 2024 թվականի հունիսի 11-ի թիվ 05.1/05.6/10532-2024 և 2024 թվականի հունիսի 19-ի թիվ 05.1//11292-2024 գրությունները, ինչպես նաև Շիրակի մարզի դատախազության կողմից 2024 թվականի հունիսի 5-ի թիվ 1634-24 գրությամբ Գյումրի համայնքի ավագանուն ներկայացված առաջարկությունները և Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Քնարիկ Հարությունյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացրած 2024 թվականի հուլիսի 22-ի Զ/1472 գրությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ներկայացնել պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցեր՝ Գյումրի համայնքի ղեկավարի հետևյալ որոշումներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մասին պահանջներով.

1) Գյումրու քաղաքապետի 2003թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1439 որոշում.
2) Գյումրու քաղաքապետի 2006 թվականի մայիսի 30-ի թիվ 628 որոշում.
3) Գյումրու քաղաքապետի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1111 որոշում.
4) Գյումրու քաղաքապետի 2006թվականի հոկտեմբերի10-ի թիվ 1331 որոշում.
5) Գյումրու քաղաքապետի 2006թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1330 որոշում.
6) Գյումրու քաղաքապետի2006 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1430 որոշում.
7) Գյումրու քաղաքապետի 2006թվականիդեկտեմբերի 18-ի թիվ 1794 որոշում.
8) Գյումրու քաղաքապետի2007թվականի հուլիսի 2-ի թիվ 1153 որոշում.
9) Գյումրու քաղաքապետի 2007թվականի նոյեմբերի 19-ի թիվ 2169 որոշում.
10) Գյումրու քաղաքապետի2008թվականի մարտի 17-ի թիվ 479 որոշում.
11) Գյումրու քաղաքապետի 2008թվականի մարտի 24-ի թիվ 531 որոշում.
12) Գյումրու քաղաքապետի2008թվականի մայիսի 7-ի թիվ 916 որոշում.
13) Գյումրու քաղաքապետի 2018թվականի հուլիսի 11-ի թիվ 1405 որոշում.
14) Գյումրու քաղաքապետի2008 թվականի հուլիսի 11-ի թիվ 1404 որոշում.
15) Գյումրու քաղաքապետի 2008թվականի թիվ 2695 որոշում.
16) Գյումրու քաղաքապետի2010թվականի հունվարի 13-ի թիվ 35-Ա որոշում.
17) Գյումրու քաղաքապետի2010թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 2452-Ա որոշում.
18) Գյումրու քաղաքապետի2010թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 2673-Ա որոշում.
19) Գյումրու քաղաքապետի2010թվականի նոյեմբերի 18-ի թիվ 2971-Ա որոշում.
20) Գյումրու քաղաքապետի2011թվականի փետրվարի 24-ի թիվ 649-Ա որոշում.
21) Գյումրու քաղաքապետի2011թվականի հունիսի 10-ի թիվ 2387-Ա որոշում.
22) Գյումրու քաղաքապետի2011թվականի հունիսի 10-ի թիվ 2386-Ա որոշում.
23) Գյումրու քաղաքապետի 2018թվականի ապրիլի 3-ի թիվ 570-Ա որոշում.
24) Գյումրու քաղաքապետի2018թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1630-Ա որոշում:

1.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքի շահերի պաշտպանության համար ձեռք բերել փաստաբանական ծառայություն՝ 12 000 000 (տասներկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Թույլատրել իրականացնել փաստաբանական ծառայության անհետաձգելի համարվող գնումը բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարիզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1–ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 1/1/1 գործառնական դասակարգման (4241) «Մասնագիտական ծառայություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

4. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանմանը՝ մինչև սույն թվականի օգոստոսի 5-ը ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջի կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 161-Ա)*

Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ_____

Լ.ՍԱՆՈՅԱՆ_____

Տ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ_____

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ_____

Ն.ՊՈՂՈՍՅԱՆ_____

Գ.ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ_____

Հ.ԱՍԱՏՐՅԱՆ_____

Ս.ԽՈՒԲԵՍԱՐՅԱՆ_____

Ա.ԲԵՅԲՈՒՏՅԱՆ_____

Ա.ՊԱՊԻԿՅԱՆ_____

Ք.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ_____

Զ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ_____

Շ.ԱՐԱՄՅԱՆ_____

Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ_____

Ա.Մ.ՄԱԹՈՍՅԱՆ_____

Ն.ԲԵԳԶԱԴՅԱՆ_____

Վ.ՀԱԿՈԲՅԱՆ_____

Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ_____

Պ.ԳԵՎՈՐԳՅԱՆ_____

Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ_____

Վ.ՀԱԿՈԲՅԱՆ_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ**

Ք. Գյումրի
2024թ. հուլիսի 26